ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի կողմից
2016 թվականին նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող
սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման
գործընթացի վերլուծության
արդյունքները**

ԵՐԵՎԱՆ 2017

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նախաբան.....3

Բաժին 1. Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի ընդհանուր նկարագիրը և ընթացակարգը.....4

Բաժին 2.«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականի ընթացքում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերլուծություն 6

2.1 Էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն.....7

2.2 Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն 12

Եզրակացություններ և առաջարկություններ 20

Հղումներ օգտագործված նյութերին.....22

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) 2017 թվականի աշխատանքային ծրագրի **[Որոշում 1]** 17-րդ կետի և արտացոլում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 2016 թվականի ընթացքում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման (այսուհետ՝ նաև էլեկտրական ցանցին միացում) գործընթացի վերլուծությունը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության կողմից էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունները **[Տեղեկատվություն]** և էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերաբերյալ Ընկերության ներկայացրած ընդլայնված տեղեկատվությունը **[Տեղեկատվություն 1]**:

Բաժին 1.

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի ընդհանուր նկարագիրը և ընթացակարգը

Էլեկտրական ցանցին միացման գործընթացը կարգավորվում է Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն **[Որոշում 2]** և 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն **[Որոշում 3]** որոշումներով:

Էլեկտրական ցանցին միացման գործընթացն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1. էլեկտրական ցանցին միացման նպատակով դիմող անձն Ընկերություն է ներկայացնում իրեն պատկանող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման դիմում,

2. մատակարարը, դիմող անձի դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝

2.1 մշակում է տեխնիկական պայմանները և էլեկտրական ցանցին միացման վճարի լրացուցիչ բաղադրիչի հաշվարկման անհրաժեշտության, պահուստային սնուցման ապահովման դեպքում համաձայնեցնում սպառողի հետ,

2.2 դիմող անձին է ներկայացնում էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս ուղարկելով իր կողմից ստորագրված միացման պայմանագիրը 2 օրինակից,

3. Մատակարարը Որոշում 2-ով սահմանված ժամկետներում՝

3.1. մշակում է անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերը, իսկ պարզեցված միացման դեպքում՝ միացման տեխնիկական նկարագիրը,

3.2 կատարում է բոլոր անհրաժեշտ համաձայնեցումները պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ անձանց հետ,

3.3 իրականացնում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման շինարարական աշխատանքները, տեղադրում հաշվառքի սարքը,

3.4 դիմող անձին է ներկայացնում էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս ուղարկելով իր կողմից ստորագրված պայմանագիրը՝ 2 օրինակից:

Տեղեկատվության համաձայն, 2016 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 4 562 բաժանորդներ: Վերջին տարիների ընթացքում էլեկտրական ցանցին միացման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016 թվականի ցուցանիշը համադրելի է միջին ցուցանիշի հետ: 2013-ից 2016 թվականների տեղեկատվությունն ըստ միացված սպառման համակարգերի քանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1

2013-2016 թվականների ընթացքում էլեկտրական ցանցին միացված սպառման համակարգերի վերաբերյալ



ԲԱԺԻՆ 2.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականի ընթացքում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերլուծություն

Հաշվի առնելով էլեկտրական ցանցին միացման գործընթացի նկարագիրը՝ Տեղեկատվություն 1-ի վերլուծությունն իրականացվել է երկու փուլերի համար՝

1. էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքում,
2. էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքում:

Վերլուծության առաջին փուլում ուսումնասիրվել են դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու, իսկ երկրորդ փուլում՝ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետները, մասնավորապես՝

ա. դրանց համապատասխանությունը Որոշում 2-ով սահմանված ժամկետներին,

բ. ժամկետների խախտման պատճառները և դրանց վրա ուղղակի կամ անուղղակի կերպով ազդող գործոնները:

Էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերլուծությունն իրականացվել է 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրական ցանցին չմիացված պատվերների մասով: Հաշվի առնելով Հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 3-ի №230Ն որոշումը **[Որոշում 4]**՝ էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերլուծության ընթացքում մինչև 2016 թվականի սեպտեմբերի 3-ն էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացված անձանց պատվերների կատարման ժամկետները հաշվարկվել են տվյալ ամսաթվից հետո դիմում ներկայացրած անձանց պատվերների ժամկետներից առանձին:

2.1 Էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն

2016 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միացման նպատակով ներկայացված դիմումների, նույն ժամանակահատվածում էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3

Էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերաբերյալ



Գծապատկեր 3-ում 2-րդ սյունակն արտացոլում է 2010-2016 թվականների ընթացքում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած և 2016 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկ ստացած պատվերների վերաբերյալ տեղեկատվությունը:

Վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են Ընկերության կողմից էլեկտրական ցանցին միացման դիմումը ստանալուց մինչև դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն

ներկայացնելու նվազագույն, միջին և առավելագույն ժամկետները, որոնք ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերալ

№	Լարման մակարդակ	Նվազագույն ժամկետ (օր)	Միջին ժամկետ (օր)	Առավելագույն ժամկետ (օր)	Դիտարկված դեպքերի թվաքանակ (հատ)
1	**0.22 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**0**	**23.0**	**1192**	**17872**
1.1	***Պարզեցված***	***0***	***12.4***	***1118***	***13170***
1.2	***Նախագծով***	***0***	***52.7***	***1192***	***4702***
2	**0.4 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**0**	**41.1**	**995**	**3942**
2.1	***Պարզեցված***	***0***	***11.3***	***668***	***1847***
2.2	***Նախագծով***	***0***	***67.4***	***995***	***2095***
3	**6(10) կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**0**	**89.1**	**1705**	**563**
3.1	***Պարզեցված***	***0***	***15.5***	***53***	***10***
3.2	***Նախագծով***	***0***	***90.5***	***1705***	***553***
4	**Բազմաբնակարան շենք**	**0**	**166.7**	**1461**	**175**
4.1	***Պարզեցված***	***0***	***0***	***0***	***6***
4.2	***Նախագծով***	***0***	***172.7***	***1461***	***169***
5	**Երկրորդ սնուցում**	**0**	**79.2**	**891**	**293**
5.1	***Պարզեցված***	***0***	***9.1***	***367***	***116***
5.2	***Նախագծով***	***0***	***125.0***	***891***	***177***

Էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերլուծությունը ցույց տվեց, որ 1 081 պատվերների դեպքում առկա է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման՝ Որոշում 2-ով սահմանված ժամկետների խախտում, որից 844 դեպքում դիմող անձանց էլեկտրական ցանցին

միացման՝ միակողմանի ստորագրված պայմանագիրն ուղարկվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, իսկ 237 դեպքում դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման պայմանագիր դեռևս չի ներկայացվել: Նշված խախտումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների խախտումների վերաբերյալ

Լարման մակարդակը, միացման տեսակը	Խախտման դեպքերի քանակը, հատ	
	Էլ. ցանցին միացման պայմանագիր չստացած պատվերներ	**Էլ. ցանցին միացման պայմանագիրը սահմանված ժամկետի խախտմամբ ստացած պատվերներ**
0.22 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	90	244
0.22 կՎ լարմամբ միացումներ նախագծերով	30	203
0.4 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	22	35
0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (մինչև 30 կՎԱ հզորություն)	18	80
0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (30 կՎԱ-ից բարձր հզորություն)	28	83
6(10) կՎ լարմամբ միացումներ	7	101
35 կՎ լարմամբ միացումներ	1	0
110 կՎ լարմամբ միացումներ	0	0
Պահուստային սնուցման միացումներ	14	37
Բազմաբնակարան շենքերի միացումներ	27	61
ԸՆԴԱՄԵՆԸ	**237**	**844**

Վերլուծության ընթացքում առանձին ուսումնասիրություն է իրականացվել էլեկտրական ցանցին միացման՝ միակողմանի ստորագրված պայմանագիր չստացած պատվերների մասով: Խախտումների պատճառների վերլուծությունը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Ընկերության կողմից դիմող անձանց սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների խախտումների պատճառների վերաբերյալ

Խախտման պատճառը	Խախտման դեպքերի քանակը, հատ		
	ՀՀ	**Երևան**	**Մարզեր**
Դիմող անձը հրաժարվել է դիմումից	9	7	2
Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման արդյունքում	64	61	3
Պետական կամ ՏԻ մարմինների գործունեությամբ պայմանավորված	153	147	6
Այլ (դիմողի հետ կնքվել է համաձայնագիր՝ նոր ժամկետ սահմանելու մասին)	11	8	3
ԸՆԴԱՄԵՆԸ	**237**	**223**	**14**

Համաձայն Աղյուսակ 3-ի՝ դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման միակողմանի կնքված պայմանագրի ներկայացման ժամկետների խախտման պատճառների մեծ կշիռը բաժին է ընկնում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությամբ պայմանավորված դեպքերին՝ 65 % և Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպմանը՝ 27%:

Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման պատճառների վերլուծության ընթացքում առանձնացվել են նախագծման անհրաժեշտություն ունեցող աշխատանքները և ուսումնասիրվել են նշված դեպքերում պայմանագրի կնքման ժամկետները: Համաձայն Տեղեկատվություն 1-ի՝ 2016 թվականին էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած պատվերների 28%-ի դեպքում մշակվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր, որոնք իրականացվել են նախագծող կապալառու կազմակերպության կողմից կամ Ընկերության սեփական ուժերով:

Միևնույն ժամանակ, իրականացվել է Տեղեկատվություն 1-ում ներառված բոլոր պատվերների միացման նախագծման աշխատանքների նախապես սահմանված ժամկետների և փաստացի ժամկետների համադրություն, որի արդյունքում պարզվել է, որ նախագծի կազմման ժամկետը պահպանվել է 6344-ից 2097-ի դեպքում, իսկ 4247 դեպքում նախագծման փաստացի ժամկետը գերազանցել է սահմանվածը: Նշված ժամկետների վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Նախագծման ժամկետների վերաբերյալ

Պատվերների քանակ (հատ)	Նախագծման ժամկետի գերազանցում (անգամ)
1965	**Մինչև 2**
1970	**2-10**
312	**10-ից ավելի**

Դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման միակողմանի կնքված պայմանագրի ներկայացման ժամկետների խախտումների քանակական համադրությունը 2015 և 2016 թվականների համար՝ Գծապատկեր 4, ցույց է տալիս, որ 2015 թվականի համեմատությամբ 2016 թվականի պատկերը բարելավվել է, ինչը վերագրվում է Ընկերության կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությամբ պայմանավորված խախտումները հիմնավորող փաստաթղթերի ներկայացմանը:

Գծապատկեր 4

Դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման միակողմանի կնքված պայմանագրի ներկայացման ժամկետների խախտումներ



2.2 Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն

2016 թվականի ընթացքում էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ստացած, նույն ժամանակահատվածում էլեկտրական ցանցին միացված և 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն չստացած սպառման համակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5

Էլեկտրական էներգիայի մատակարարման գործընթացի վերաբերյալ



Գծապատկեր 5-ում 2-րդ սյունակն արտացոլում է 2010-2016 թվականների ընթացքում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած և 2016 թվականի ընթացքում էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքած պատվերների վերաբերյալ տեղեկատվություն: Նույն գծապատկերի 3-րդ սյունը ներառում է տեղեկատվություն 2010-2016 թվականների ընթացքում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած և 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր չկնքած պատվերների վերաբերյալ:

Վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու

առաջարկություն ներկայացնելու նվազագույն, միջին և առավելագույն ժամկետները, որոնք ներկայացված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերալ

№	Լարման մակարդակ	Նվազագույն ժամկետ (օր)	Միջին ժամկետ (օր)	Առավելագույն ժամկետ (օր)	Դիտարկված դեպքերի քանակ (հատ)
1	**0.22 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**0**	**43.0**	**1588**	**16839**
1.1	***Պարզեցված***	***0***	***27.0***	***1588***	***12505***
1.2	***Նախագծով***	***0***	***89.0***	***1539***	***4334***
2	**0.4 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**0**	**57.9**	**1925**	**3551**
2.1	***Պարզեցված***	***0***	***23.9***	***663***	***1730***
2.2	***Նախագծով***	***0***	***90.1***	***1925***	***1821***
3	**6(10) կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**2**	**199.3**	**2487**	**455**
3.1	***Պարզեցված***	***2***	***37.9***	***101***	***8***
3.2	***Նախագծով***	***2***	***202.2***	***2487***	***447***
4	**Բազմաբնակարան շենք**	**11**	**350.5**	**1816**	**127**
4.1	***Պարզեցված***	***14***	***14***	***14***	***6***
4.2	***Նախագծով***	***11***	***367.2***	***1816***	***121***
5	**Երկրորդ սնուցում**	**0**	**76.7**	**644**	**252**
5.1	***Պարզեցված***	***0***	***17.6***	***99***	***111***
5.2	***Նախագծով***	***1***	***123.2***	***644***	***141***

Համաձայն Որոշում 2-ի 13.5 կետի՝ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման

պայմանագրի կնքման օրվանից մինչև դիմող անձին էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը և էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 45 աշխատանքային օրը,

2) էլեկտրական ցանցին 0,4 կՎ լարմամբ՝

ա. պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը,

բ. մինչև 30 կՎԱ (ներառյալ) հզորությամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 85 օրը,

գ. 30 կՎԱ-ից բարձր միացման մնացած բոլոր դեպքերում՝ 130 օրը,

3) էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում՝ 140 օրը,

4) էլեկտրական ցանցին 35 կՎ, 110 կՎ լարմամբ կամ բազմաբնակարան շենքերի միացման դեպքում՝ 340 օրը:

Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերլուծությունը ցույց տվեց, որ 1026 պատվերների դեպքում առկա է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման՝ Որոշում 2-ով սահմանված ժամկետների խախտում, որից 394 դեպքում դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիրն ուղարկվել է սահմանված ժամկետի լրանալուց հետո, իսկ 632 դեպքում դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր դեռևս չի ներկայացվել: Նշված խախտումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ

Լարման մակարդակը, միացման տեսակը	Խախտման դեպքերի քանակը, հատ	
	Էլ. ցանցին միացման պայմանագիր չստացած պատվերներ	**Էլ. ցանցին միացման պայմանագիրը սահմանված ժամկետի խախտմամբ ստացած պատվերներ**
0.22 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	262	140
0.22 կՎ լարմամբ միացումներ նախագծերով	166	73
0.4 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	57	25
0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (մինչև 30 կՎԱ հզորություն)	54	36
0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (30 կՎԱ-ից բարձր հզորություն)	26	28
6(10) կՎ լարմամբ միացումներ	39	44
35 կՎ լարմամբ միացումներ	0	0
110 կՎ լարմամբ միացումներ	0	0
Պահուստային սնուցման միացումներ	9	22
Բազմաբնակարան շենքերի միացումներ	19	26
ԸՆԴԱՄԵՆԸ	**632**	**394**

Վերլուծության ընթացքում առանձին ուսումնասիրություն է իրականացվել էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն

չստացած պատվերների մասով: Խախտումների պատճառների վերլուծությունը ներկայացված է Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ

Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների խախտման պատճառը	Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների խախտման դեպքերի քանակը, հատ		
	ՀՀ	**Երևան**	**Մարզեր**
Դիմող անձը չի վճարել միացման վճարը	140	24	116
Դիմող անձը չի ներկայացրել սահմանված փաստաթղթերը	18	9	9
Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման արդյունքում	106	23	83
Պետական կամ ՏԻ մարմինների գործունեությամբ պայմանավորված	38	37	1
Այլ (դիմողի հետ կնքվել է համաձայնագիր՝ նոր ժամկետ սահմանելու մասին)	329	74	255
Դիմող անձը հրաժարվել է	**1**	**0**	**1**
ԸՆԴԱՄԵՆԸ	**632**	**167**	**465**

Ինչպես երևում է Աղյուսակ 7-ից, Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու՝ Որոշում 2-ով սահմանված ժամկետների խախտման դեպքերից մոտ 52%-ում դիմող անձանց հետ կնքվել է լրացուցիչ համաձայնագիր՝ էլեկտրական

ցանցին միացման ժամկետի երկարաձգման վերաբերյալ, իսկ Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման արդյունքում թույլ տրված ժամկետների խախտումները կազմել են ընդհանուրի մոտ 17%-ը:

Գծապատկեր 6-ում ներկայացված է դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի ներկայացման ժամկետների խախտումների քանակական համադրությունը 2015 և 2016 թվականների համար:

Գծապատկեր 6

Դիմող անձանց էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի ներկայացման ժամկետների խախտումներ



Վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են առանց համապատասխան միացման վճարի գանձման՝ էլեկտրական ցանցին միացման դեպքերը: Մասնավորապես, Հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 307Ն որոշման համաձայն, սկսած 2011 թվականի հոկտեմբերի 1-ից՝ նոր սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման նպատակով դիմող անձը պարտավորվում է վճարել սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարի 50%-ը՝ էլեկտրական ցանցին միացման պայմանագիրը կնքելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Միևնույն ժամանակ,

համաձայն նույն որոշման՝ միացման վճարի մնացած մասը դիմող անձը պարտավորվում է վճարել էլեկտրամատակարարման աշխատանքների ավարտից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

Միևնույն ժամանակ, 192 պատվերի դեպքում միացման վճարը վճարվել է ոչ ամբողջությամբ, որից 95-ի դեպքում փաստացի վճարումը կազմել է միացման վճարի մինչև 50%-ը, իսկ այն պատվերների թիվը, որոնց դեպքում էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն է ներկայացվել առանց միացման վճարի գանձման կազմել է 1 941:

Հարկ է նշել նաև, որ որոշ դեպքերում էլեկտրական ցանցին միացման՝ ժամկետները խախտվել են դիմող անձանց պատճառով: Մասնավորապես, Տեղեկատվություն 1-ում առկա՝ էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն ստացած անձանցից 653-ը, 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ, ներկայացված պայմանագրերը չեն ստորագրել: Միևնույն ժամանակ, 212 պատվերներ, որոնց դեպքում պայմանագիրը դիմող անձին ներկայացնելու օրվանից անցել է ավելի քան 1 տարի, վերլուծության մեջ չեն ներառվել:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ 2016 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միացվել են 4562 պատվեր, ինչը շուրջ 53%-ով գերազանցում է 2015 թվականի ցուցանիշը:

Միևնույն ժամանակ, 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրական ցանցին չմիացված պատվերների շուրջ 47%-ի դեպքում (1081 պատվեր) առկա է էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման, իսկ շուրջ 45%-ի դեպքում (1026 պատվեր)՝ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման ժամկետների խախտում: Բերված ցուցանիշները վկայում են Ընկերության կողմից էլեկտրական ցանցին միացման գործընթացի կազմակերպման բարելավման անհրաժեշտության մասին: Ուստի, այս նպատակով անհրաժեշտ է անհապաղ գործուն միջոցներ ձեռնարկել գործընթացի կազմակերպման և իրականացման աշխատանքներն առավելագույնս արդյունավետ իրականացնելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ, 2015 թվականի համապատասխան ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքներով, 2015 թվականին նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 67% (700 պատվեր) և 28% (307 պատվեր): Վերլուծելով էլեկտրական ցանցին միացման տվյալները, համաձայն որի 2016 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միացված պատվերների գերակշռող դեպքում կիրառվել է Որոշում 4-ով սահմանված ընթացակարգը՝ կարելի է եզրակացնել, որ էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետների խախտման քանակի նվազեցումը հնարավոր արդյունք է հանդիսացել Որոշում 4-ի ընդունման: Հարկ է նշել որ Որոշում 4-ով իրականացված փոփոխությունները նպատակ ունեին Ընկերության ներքին գործընթացների առավելապես արդյունավետ և կազմակերպված իրականացմանը, ինչն արդյունքում պետք է հանգեցներ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրեր կնքելու համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող տարաբնույթ աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, մինչդեռ՝ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի կնքման ժամկետների խախտման

դեպքերի էական աճը 2015 թվականի համեմատությամբ փաստում է ճիշտ հակառակը:

Միևնույն ժամանակ, ժամկետների խախտումների պատճառների ուսումնասիրության արդյունքների համաձայն, դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման միակողմանի կնքված պայմանագրի ներկայացման ժամկետների խախտման պատճառներից զգալի մաս բաժին է ընկնում Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպմանը՝ 27%, իսկ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման ժամկետների խախտումների դեպքում՝ 17%:

Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման արդյունքում ժամկետների խախտումների գերակշռող մասը բաժին է ընկնում նախագծման աշխատանքների կազմակերպման գործընթացին: Մասնավորապես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականի ընթացքում Տեղեկատվություն 1-ում առկա բոլոր պատվերների ուսումնասիրության շրջանակում Ընկերության կողմից սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման նպատակով անհրաժեշտ նախագծման աշխատանքների նախապես սահմանված ժամկետների և փաստացի ժամկետների համադրությունը ցույց տվեց, որ նախագծի կազմման ժամկետը պահպանվել է պատվերների 33%-ի դեպքում, իսկ 67% դեպքում նախագծման փաստացի ժամկետը գերազանցել է սահմանվածը: Այս առնչությամբ ևս ակնկալվում է գործընթացի լավարարմանն ուղղված Ընկերության համապատասխան միջոցների նախաձեռնում՝ այն հնարավորինս նպատակային և գործուն դարձնելու համար:

Հաշվի առնելով նշվածը, անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել նախագծային աշխատանքների կազմակերպման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչը կնպաստի գործընթացի առավել ճշգրիտ և արդյունավետ կազմակերպմանը և ժամկետների խախտումների դեպքերի նվազեցմանը:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» №399Լ որոշում.

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշում.

Որոշում 3 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշում.

Որոշում 4 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №230Ն որոշում.

Տեղեկատվություն - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 6-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» №199Ա որոշմամբ սահմանված կարգով ներկայացվող եռամսյակային տեղեկատվություն

Տեղեկատվություն 1 - նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերաբերյալ Ընկերության ներկայացրած ընդլայնված տեղեկատվություն